ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2022/73

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2022 թ. N 73

«ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Գրիգոր Նարեկացի» համալսարան» ՍՊԸ /ԳՆՀ/
Գործունեության հասցեն՝ Արցախի Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 44
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2022 թվականի հոկտեմբերի 10-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց՝ «Գրիգոր Նարեկացի» համալսարան» ՍՊԸ (այսուհետ՝ ԳՆՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 24 դեկտեմբերի 2019 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 13 հունվարի 2022 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 02-05 մայիսի 2022 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 25 հուլիսի 2022 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 09 սեպտեմբերի 2022 թ.

«Գրիգոր Նարեկացի» համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար են գնահատվել **«Հետազոտություն և զարգացում»** և **«Արտաքին կապեր և միջազգայնացում»** չափանիշները:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Համալսարանի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԳՆՀ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Համալսարանը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ՄՈՒՀ-ի կողմից կատարված են աշխատանքներ մասնագիտական կրթական ծրարգրերի բարեփոխման և ՀՀ ՈԱԾ-ի նկարագրիչներին համապատասխանեցման ուղղությամբ: Բոլոր կրթական ծրագրերում նկարագրված են վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները. չնայած այդ մեթոդները դեռևս բազմազան չեն և կրկնվում են, այնուամենայնիվ առկա են բավարար հիմքեր ըստ մասնագիտությունների առանձնահատկությունների ծրագրերի հետագա բերելավման համար:

ՄԿԾ-ներում տեղ է գտել նաև կամընտրական առարկաների կրթամասը, ավելացվել է գործնական պարապմունքների տեսակարար կշիռը:

Համավարակի պայմաններում և հետպատերազմյան շրջանում ՄՈՒՀ-ը կարողացել է պահպանել կրթության շարունակականությունը, հաջողությամբ կիրառվել է հեռավար կրթության տարբերակը, ստեղծվել է ձայնագրված դասախոսությունների բազա:

Բուհում աշխատում են բարձր որակավորում ունեցող ՊԴ և ուսումնաօժանդակ կազմ: ՊԴ կազմի մեծ մասը բավականին երիտասարդ է, ինչը հեռանկարային է բուհի ապագայի համար: Մյուս կողմից բացասական է, որ փաստացի չկա հստակ գիտական ներուժ: ՄՈՒՀ-ը, հաշվի առնելով ուսանողների ընթացիկ թվաքանակը, իրականացնում է վարչական և ՈՒՕ կազմի օպտիմալացում: Հետպատերազմական իրավիճակով պայմանավորված՝ կադրերի հոսունություն է եղել բուհում, ինչը որպես առաջնային խնդիր մնում է բուհի ղեկավարության օրակարգում. համապատասխան քայլեր են ձեռնարկվում պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովելու նպատակով:

ՄՈՒՀ-ը հնարավորինս ստեղծել է կրթական ծրագրերի իրականացման համար համապատասխան պայմաններ: ՄՈՒՀ-ն իր ՌԾ-ում կարևորել է ենթակառուցվածքների արդիականացումը, արդյունավետ ուսումնական միջավայրի և ռեսուրսների ապահովումը ՄԿԾ-ների իրականացման համար: ՄՈՒՀ-ն ունի ֆինանսների կառավարման քաղաքականություն,

տարեկան բյուջեում ներառել է ռեսուրսների ուղղությամբ անհրաժեշտ ծախսեր, սակայն դրանք դեռևս հստակեցված չեն ՝ ըստ ՌԾ-ի նպատակների և ՄԿԾ-ների իրականացման:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը

ԳՆՀ-ն ունի տարածաշրջանի առաջնահերթությունները մատնանշող առաքելություն, հաստատության վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունն ընդհանուր առմամբ համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը:
Բուհը ստեղծել է անհրաժեշտ փաստաթղթային հենք՝ ապահովելու արդյունքահեն կառավարում, հաշվետվողականության հստակ մեխանիզմներով:
Փորձ է արվում ապահովել կոլեգիալ կառավարում, սակայն առկա է միանձնյա կառավարման վտանգներ.ռեկտորը ղեկավարում է ոչ միայն ռեկտորատը, գիտական խորհուրդը, այլ նաև Մասնակիցների ընդհանուր ժողովը, որը ԳՆՀ-ի կառավարման բարձրագույն մարմինն է և ունի համալսարանի կառավարման ու գործունեության ցանկացած հարցի վերջնական կարգավորման իրավունք:

Վարչարարության հիմքում ընկած է որակի կառավարման սկզբունքը, որին նպաստել է 2018 թ. ստեղծված որակի ապահովման կենտրոնը: Համալսարանն ունի ՈԱ քաղաքականություն և գործընթացներ, որոնք ներառված են ռազմավարական ծրագրում:
ԳՆՀ-ն ունի հիմնական գործընթացների և որակի ներքին ապահովման գործիքների շրջանակ, սակայն մեծ մասը դեռ պլանավորման կամ իրականացման փուլում են:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը*:

ՄՈՒՀ-ում կիրառվում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, որի արդյունքում ավելացել է ուսանողների թվաքանակը:
Բուհում ստեղծված է շրջանավարտների, կարիերայի և պրակտիկայի կենտրոն, որը ակտիվ գործունեություն է ծավալում: Սակայն, թույլ է ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում: Թեև ՄԿԾ-ներում ներառված է հետազոտական բաղադրիչը, այնուամենայնիվ, հետազոտական, վերլուծական կարողությունները թույլ է զարգացած ուսանողների մոտ:
ԳՆՀ-ն իր ՌԾ-ում կարևորել է արդիական հետազոտական ուղղությունների զարգացումը, դրանցում դասախոսների և ուսանողների ներգրավվածության ընդլայնումը, հետազոտական աշխատանքների միջազգայնացումը, սակայն ՄՈՒՀ-ի հավակնությունները հետզոտական ուղղությամբ բարձր նշաձող ունեն. հաշվի առնված չեն ՄՈՒՀ-ի ներուժը՝ մարդկային և ֆինանսական ռեսուրսները:
ՄՈՒՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածությունն ապահովող մեխանիզմ է բակալավրիատի և մագիստրատուրայի ՄԿԾ-ներում հետազոտության բաղադրիչի առկայությունը: Սակայն ավարտական, ինքնուրույն աշխատանքներում և մագիստրոսական թեզերում հետազոտական, կիրառական և վերլուծական բաղադրիչը թույլ է: Գիտահետազոտական գործընթացներում կարևոր է ՈՒԳԸ-ի գործունեությունը և ներգրավումը, որը ևս լրիվ չի գործում:

ՄՈՒՀ-ն իր ՌԾ-ում հետազոտական ոլորտում սահմանված հավակնություններին հասնելու համար չունի հստակ քաղաքականություն, ընթացակարգեր և անհրաժեշտ ռեսուրսներ, չունի տեսլական, առկա չեն միջնաժամկետ ծրագրեր, առկա գործընթացների արդյունավետության գնահատում չի իրականացվում, բացակայում է հետազոտության ոլորտում միջազգայնացման քաղաքականությունը:

ՄՈՒՀ-ն ունի միջազգայնացման և արտաքին կապերի զարգացմանն ուղղված խնդիրներ, քանի որ դրանց նշաձողը ևս բարձր է սահմանված: ԱՀ կարգավիճակը, հստակ քաղաքականության բացակայությունը և ընթացակարգեր չունենալը խանգարող հանգամանքներ են շարժունության, ակտիվ միջազգային կապերի ու գիտաուսումնական գործունեության զարգացման համար:

ՄՈՒՀ-ն ստեղծել է արտաքին կապերի բաժին, որն ունի կանոնադրություն, սահմանված են գործառույթներ, սակայն միջնաժամկետ, կարճաժամկետ պլանների, հստակ ընթացակարգերի, միջազգային փորձի ուսումնասիրության, ինչպես նաև մարդկային ռեսուրսների բացակայության պայմաններում արտաքին կապերի բաժինը չի կարողանա ակնալվող արդյունք ապահովել: Առկա է սակայն համագործակցություններ Արցախի տարբեր բուհերի ու կառույցների հետ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է և իրականացումը կբերի որակական բարելավումների, սակայն բավականին մեծ է կախվածությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գրիգոր Նարեկացի» համալսարան» ՍՊԸ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Հետազոտություն և զարգացում»** և **«Արտաքին կապեր և միջազգայնացում»** չափանիշներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - ռիսկերի կառավարման պլանի մշակման անհրաժեշտությանը՝ տարբեր իրավիճակներում ռիսկերի կառավարման հստակ սցենարներով և լուծումներով,
   - հստակ չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - վերլուծությունների, հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը և հաշվետվությունների իրականացմանը,
   - տարբեր ստորաբաժանումների միջև փոխգործակցության զարգացմանը՝ կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով,
   - ՄԿԾ առարկայական կառուցակարգերի բարելավման, կրեդիտների բաշխման քաղաքականության վերանայման, գործնական պարապումքների տեսակարար կշռի ավելացման,

- Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության քաղաքականության ներդմանը, ապահովելով այդ մեթոդների փոխկապակցվածությունը ՄԿԾ-ների վերջնարդյունքների հետ,
- ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը,
- բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
- ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,
- Համալսարանի կառավարման վրա որակի ապահովման համակարգի ազդեցության բարձրացմանը:

4. Կազմակերպել ԳՆՀ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԳՆՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. հոկտեմբերի 31
ք.Երևան